ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2025թ. թիվ 38-Ա

Փ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Փիրուզա Վալերիկի Հայրապետյանին 2025 թվականի փետրվարի 7-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2020 թվականի փետրվարի 6-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Փիրուզա Հայրապետյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն ծանուցել հասցեատիրոջը:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. հունվարի 22
ք.Վանաձոր